ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ՝ 19.01.2026Թ. ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

19-ը փետրվարի 2026թ. *ք. Երևան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ՄԽ-Ո-05

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՁԵՎԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ մրցութային խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Սահմանել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի մասնակցի գնահատման հարցաթերթի ձևը, գնահատման ենթակա չափանիշները և գնահատման միավորները՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐՈՒՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՂՈՅԱՆ

ՀԱՐՈՒԹ ԱԿԼՈՒՆՑ

Հավելված

Մրցութային խորհրդի

2026թ. փետրվարի 19-ի

Թիվ ՄԽ-Ո- 05 որոշման

Հարցաթերթ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մասնակցի
_____հարցազրույցի փուլի
(անունը, ազգանունը)

h/h	Գնահատման ոլորտը	Գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշներ	Գնահատման առավելագույն միավորները	Թեկնածուի գնահատման միավորը	Նշումներ
1.	**Մասնագիտական փորձ, անձնական որակներ և հմտություններ**				
1.1	Մասնագիտական աշխատանքի փորձառությունը	• Թեկնածուի նախկինում իրականացրած աշխատանքների վերաբերելիությունը կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի լիազորություններին. • Մասնագիտական փորձառության ընդհանուր ժամկետը. • Ղեկավարման/կառավարման հմտությունները. • Նախաձեռնողականությունը. • Թիմային աշխատանքի ունակությունները:	15		

1.2	Հանձնաժողովի անդամ դառնալու շարժառիթն ու ակնկալիքը	• Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածություն • Օրենսդրական մակարդակում և գործնականում Հանձնաժողովի գործունեության առնչությամբ առկա խնդիրներին տեղեկացված լինելը և դրանց շտկմանն ուղղված քայլեր իրականացնելու տեսլականի առկայությունը և ունակությունը. • Պաշտոնում ընտրվելու դեպքում,ապագա ծրագրերն ու մտադրությունները. • Քաղաքական չեզոքությունը. • Հետաքրքրությունն՝ ապագա մասնագիտական գործունեության նկատմամբ:	5		
1.3	Բարեվարքություն	• Թեկնածուի բարոյական սկզբունքները. • Գույքային դրության համապատասխանությունն օրինական եկամուտներին. • Շահերի բախման իրավիճակում ճիշտ գործելու կարողությունը. • Անօրինականության մասին ազդարարելու պատրաստակամությունը. • Հանրային ծառայողի վարքագծի կանոններին տիրապետելը: • Արդարամտությունը	10		

1.4	Վարվեցողություն	• Թեկնածուի վարքը և վարվելակերպը. • Խոսելառճը ու ձայնի տոնայնությունը, շարժումները. • Դիմացինի նկատմամբ հարգալից վերաբերմունքը. • Զսպվածությունը. • Մեփական զգացմունքները կառավարելու ունակությունն ու ինքնատիրապետումը:	5		
1.5.	Հաղորդակցվելու հմտությունները	• Թեկնածուի՝ հարցեր լսելու կարողությունը. • Սիրալիրությունը. • Տրված հարցերին պատասխանելու ունակությունը. • Անկաշկանդ շփվելու կարողությունը. • Վստահություն ներշնչելը. • Ազատ արտահայտվելու և հստակ մտքերը շարադրելու ունակությունը. • Միջավայրին արագ հարմարվելու ունակությունը. • Անկեղծությունը:	5		
1.6.	Վերլուծական կարողությունները	• Տեղեկատվության արագ ու ճիշտ ընկալումը. • Ստացված տեղեկատվության զտման արդյունքում անհրաժեշտ տվյալների առանձնացումը. • Տեղեկատվությունն օբյեկտիվորեն վերլուծելն ու դրա վերաբերյալ կարծիք արտահայտելը.	5		

		• Նոր առաջարկություններով հանդես գալը. • Տվյալներ համադրելու, համեմատական վերլուծություններ անելու կարողությունը • Միաժամանակ տարաբնույթ գործերում առաջնահերթությունները սահմանելու կարողությունը.			
1.7.	Հանպատրաստից կողմնորոշվելու կարողությունը	• Սթրեսակայունությունը. • Ճնշման տակ աշխատելու կարողությունը. • Հարցերին արագ և պատշաճ պատասխանելու ունակությունը. • Նոր միջավայրում արագ ինքնադրսևորվելու ունակությունը	5		
1.8.	Պատասխանատվության զգացումը	• Սեփական սխալներն ու թերություններն ընդունելն ու դրանց մասին բարձրաձայնելը. • Թեկնածուի պատկերացումները պատասխանատվության մասին. • Ճշտապահությունը. • Կատարած արարքների հետևանքները կրելու պատրաստակամությունը. • Հետևողականությունը • Սեղմ ժամկետներում աշխատելու կարողությունը:	5		
1.9.	Հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառումը	• Դիմացինի և սեփական մասնագիտական կարողությունների ճիշտ գնահատումն ու աշխատանքի և	5		

		պարտականությունների արդար բաժանումը. • Թիմում աշխատելու կարողությունը. • Զբաղեցրած աշխատանքից դուրս պաշտոնը չգործարկելը. • Ազնվությունը. • Բարյացակամությունը			
1-ին կետի ենթակետերի միավորների հանրագումարը՝			60		
2.	**Հանձնաժողովի անդամի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջների իմացություն**				
2.1.	Մասնագիտական հարց 1		20		
2.2.	Մասնագիտական հարց 2		20		
2-րդ կետի ենթակետերի միավորների հանրագումարը			40		
Ընդամենը (բոլոր ենթակետերի միավորների հանրագումարը)՝			100		